ԼՍԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Վորներ Բ., 11 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Մի օր ընտանեկան երեկոյի ժամանակ մայրս խոսում էր Սուրբ Հոգու մասին: Նա ասաց, որ Սուրբ Հոգին հաճախ խոսում է՝ միտք տալով ձեր բանականությանը:

Երբ նա ասաց այդ, ես շատ զարմացա: Հենց քիչ առաջ ես աղոթել էի և խնդրել, որ իմ Երկնային Հայրն օգնի ինձ լսել Սուրբ Հոգուն: Բայց ես չգիտեի, որ Սուրբ Հոգին կարող էր այդպես խոսել ինձ հետ իմ մտքում: Ողջ իմ կյանքում ես մտքեր էի ունեցել, որոնք առաջնորդել էին ինձ ընտրել ճիշտը: Այժմ ես իմացա որ այդ մտքերը գալիս էին Սուրբ Հոգուց:

Այդ օրվանից ի վեր ես ավելի շատ եմ նկատել Սուրբ Հոգուն: Հենց անցած կիրակի, մենք նորից ընտանեկան երեկո ունեցանք: Այս անգամ դա վկայությունների մասին էր: Ես իրականում չգիտեի, թե ինչ էր վկայությունը, ուստի, ես հարցրեցի հայրիկիս: Նա ինձ ասաց, որ վկայությունն այն է, ինչ դու գիտես կամ հավատում ես, որ ճշմարիտ է: Նա ասաց, որ մենք ստանում ենք մեր վկայությունները Սուրբ Հոգուց: Հետո ես մտածեցի, թե ինչպես սկսեցի ավելի շատ նկատել Սուրբ Հոգին և «ԲՈՒՄ»: Ես ևս վկայություն ստացա:

Այս գիտելիքն օգնում է ինձ շատ ավելի երջանիկ զգալ: Ես ուզում եմ Հիսուս Քրիստոսի ավելի լավ հետևորդ լինել և միշտ լսել Սուրբ Հոգուն: ●

ԿԱՄՈՒՆԵՐԸ՝ ԷՐԵԱՄ ԿՈՆԻ